



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ Ա. ՄԱԶՄԱՆՅԱՆ



« 06 » 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ 0102-21

Ձեռնարկողը՝ «ՓՈՔՐ ԿՂԶԻ» ՍՊԸ

ք.Սևան, Խաղաղության 4, բն.30

**Գործունեությունը՝ Դրախտիկ գյուղի 1-ին փողոց 63, 63/1 հողամասերում
հանգստյան գոտու կառուցապատման աշխատանքների
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**

Գեղարքունիքի մարզ, Շողակաթ համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Գ. Գևորգյան

Առդիր՝ 6 թերթ

Նախատեսվող շինարարական աշխատանքների ընթացքում ծառահատում չի իրականացվելու: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տնկել թվով 72 հատ փշատերև ծառ, մասնավորապես՝ կաղնի, գիհի, սոճի:

Հանգստի գոտում նախատեսվում է կառուցել երկու տեսակի՝ N1, N2 տիպային քրթեջներ:

Ամփոփ տեխնիկատնտեսական ցուցանիշները 3 տիպային քրթեջների համար հետևյալն են.

- հողատարածքի մակերես՝ 3.5 հա
- կառուցապատման մակերես
- քրթեջներ՝ 4752.5քմ, (13.6%)
- օժանդակ շինություն՝ 235.5քմ, (0.7%)
- սպասարկող սալվածքներ և ճանապարհներ՝ 4347.0քմ, (12.4%)
- կանաչապատման մակերես՝ 26250քմ (75. %), որից 4071 քմ գեոցանցային

կանաչապատում

- բնակելի մակերես՝ 3882.7քմ
- համարների քանակ՝ 58 համար
- հանգստացողների քանակ՝ 116 անձ

Շինությունները բազմաֆունկցիոնալ հասարակական սպասարկման շինություններ են: Արտաքին պատերը նախատեսված են կանոնավոր ձևի տուֆ քարերով երեսպատված կոպտատաշ ֆելզիտե քարով:

Հանգստի գոտու նախագծային լուծումներն իրականացվել են նախագծման թույլտվության պահանջների և նշված գոտու համար սահմանված քաղաքաշինական չափորոշիչներին /Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագիծ/ համապատասխան: Նախագծված տարածքում 1905.0 մ բացարձակ նիշից ցածր հիմնական շինություններ նախատեսված չեն: Համաձայն նախագծի՝ շինությունների առավելագույն թույլատրելի բարձրությունն ընդունվել է 7մ: Հանգստի գոտու տարածքում տրանսպորտի կայանատեղին նախատեսված է մուտքային մասում:

Հանգստի գոտու ջեոուցումը և տաք ջրամատակարարումը նախատեսված է էլեկտրականությամբ: Տարածքի էլեկտրամատակարարումը կիրականացվի «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն: Հանգստի գոտու համար կոմունալ-կենցաղային նպատակով ջրօգտագործումը սկզբնական շրջանում կիրականացվի բերովի ջրով, մասնագիտացված ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Հետագայում հնարավոր կլինի, ջրամատակարարումն ապահովել մոտակա ջրազծից: Տարածքում կտեղադրվի ջրի ռեզերվուար, որը կմիացվի ներքին ցանցին: Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս կհեռացվեն արտաքին ցանց, որտեղից կուղղվեն կենսաբանական մաքրման կայան, քանի որ տարածքում կոյուղատարը բացակայում է: Մաքրման կայանի տեղադիրքը նախատեսված է 1908մ բացարձակ նիշից բարձր:

Հանգստի գոտու համար նախատեսված լողափը կկահավորվի ՀՀ Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման տեխնիկական բնութագրերի համաձայն:

Հանգստի գոտու շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2 տարվա ընթացքում, որից հողային աշխատանքների տևողությունը կկազմի 2 ամիս: Հողային

